

ՍԱՐՄԵՆ

ՅԵՐԿՈՒ
ԱՌԱԿ



891.99Լ
U-26

ՊԵՏՐՈՍ

891.99Լ

Ա-ՁԵ

ևր

ՍԱՐՄԵՆ

2011-071

ՅԵՐԿՈՒ ԱՌԱԿ

Նկարներ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Z U S M E S Z P U S
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ՝ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1940

29 JUL 2013

42583

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Ամուսն մի որ առյուծը վեհ,
Փառափոր ճաշն ուտելուց վերջ,
Ձով անտառում հանգիստն փոփել՝
Սումփում եր խոր քնի մեջ:

Այդ ժամանակ մի պատիկ մուկ
Դուրս ե գալիս մուկն տնակից,
Ձգուշարար ու անաղմուկ
Քնածի մոտ վազում կողքից:

Սիրա ե անում մկիկը խեղճ,
Բարձրանում ե նրա մեջքին,
Ման ե գալիս փորին, կրծքին,
Գալիս, նստում ականջի մեջ:

Մի աննշմար ցավ ե զգում
Անապատի ահեղ արքան,
Բարկանում ե այդ ահարկուն՝
Թաթը պարզում, բռնում մկան:

Բռնում ե, բայց չի սպանում
Առյուծն ամեն ձեռք ընկածին.
«Անվանս պատիվ, փառք չի բերում,
Թե շարդեմ այս անիծվածին:

Այս ջնջինը ինչի՞ս ե պետք,
Ձենք հանդիպի ել մենք յերբեք» —



1899
40

САРМЕН
ДВЕ БАСНИ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

Ասում ե են սարն ահագին
Ու բաց թողնում խեղճ մկնիկին:

Այդ որից մի, թե մի քանի
Տարիներ են գալիս-գնում,
Մի որ առյուծն իր կորյունին
Վորոնում ե ու չի գտնում:

Վորոնում ե շատ վշտացած,
Կարում ձորեր, դաշտերն անվերջ,
Անտառ մտնում. մեկ ել հանկարծ,
Իրը՛ մփ, ընկնում թափարդի մեջ:


Յեվ իր սեղմվող վտաքի ցավից
Այնպես զոռում ե, մռնչում,
Վոր լսողները սարսափից
Թեվ են առնում, հեռու փախչում:

Յեվ անտառում խլանում են
Թռչունի յերգ, առվի կարկաչ.
Առյուծի ձայնն ընկնում ե են
Թշվառական մկան աղանջ:

Մոտ ե վազում, և ինչ տեսնի,
Բարերարը մահվան դռան.
Մտածում ե, թե վոնց անի,
Վոր ոգնության հասնի նրան:

Յեվ մկնիկը, այն սուս-փուսը,
Յերախտապարտ, ինքնավստահ,
Ներս ե սողում այն խոր փոսը,
Ուր ընկած եր առյուծ հըսկան:

Կրծոտում ե ու կտրատում
Կաշե փոկերն ամեն կողմից,



Յե՛վ առյուծին շուտ ազատում—
Տանջող, մաշող գերությունից:

Անապատի վեհանձն արքան
Մկան բարիքը տեսնելով,
Զգացվում է, հուզվում այնքան,
Յե՛վ ասում է մոնչոցով.

—Ճմարիտ վոր ամենախեղճ,
Ամենափոքր եյակն անգամ
Իր տեղում վեհ, քաջ է ու մեծ:
Շնորհակալ եմ, մուկ բարեկամ:

ՈՁՆ ՈՒ ՋՈՒԿԸ

Որվա մի որ յեղեգնուտում
Ոձն ու ձուկը յեղբայր դարձան.
Դուրսն արեվոտ, ուրախ, ժպտուն,
Յերկնի մեջքին՝ վառ ծիածան:

Ոձը ասավ.— «Ով յեղբայր ձուկ,
Ի՞նչ կլինի, վոր ինձ ես զուրկ,
Նեղլիկ, անլույս բնից հանես
Ու շալակիդ առնես տանես
Են լայնարձակ ծովի գրկում
Լավ ման ածես մինչ իրիկուն»:

Ձուկը ասավ.— «Լավ կլինի,
Յեկ, շալակեմ առնեմ-տանեմ,
Կապույտ ջրում քեզ ման ածեմ,
Մոռցիր դարձերդ հազար ու մի,
Տես, մեր ծովը ինչեր ունի»:

Ոձը ծալվեց ողակ-ողակ,
Ամուր նստեց ձկան մեջքին,
Ձուկը ծովը մտավ արագ,
Մոփս անսահման, ծոփս ահագին:

Գառ խմբագիր՝ Վ. Գրեգորյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսազանյան

Գլավղիտի լիազոր՝ Բ—1025, Հրատ. 5129.

Պատվեր 53. Տիրած 4000.

Քուղթ 62×94. Տպագրակ. 1/2 մամ.

Մեկ մամուլում 24,480 նշան.

Հանձնված է արտագրության 10 հունվարի, 1940 թ.

Ստորագրված է տպագրության համար 31 հունվարի 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Յերեան, Լենինի փ. 65.

« Ազգային գրադարան



NL0401599

12583

ԳԻՆԸ 50 ԿՊՊ

ՏԱՐՄԵՆ
ԴՎԵ ԲԱՏԻՆ
Գնա Արմ. ՍՏՐ Երեվան